

Քաղաքականության համառոտագիր

Դեկտեմբեր 2022

Եվրամիության հետ համագործակցության սահմանափակումները.

Ուկրաինայի վրա Ռուսաստանի հարձակումն ու դրա հետևանքները Հայաստանի արտաքին քաղաքականության վրա

Հարություն Ոսկանյան ¹

Հիմնական դրույթները

Ուկրաինայում Ռուսաստանի վարած պատերազմը մեծացրել է Ղարաբաղյան Երկրորդ պատերազմի ավարտից հետո Հայաստանում տիրող անհանգստությունը: Արևմուտքի հետ Ռուսաստանի առնակատումը սահմանափակել էր ՀՀ արտաքին քաղաքականության հնարավորությունները, որը Ադրբեջանի հետ ձգտում էր առաջընթաց գրանցել, այսպես կոչված, խաղաղության համաձայնության հարցում: Բարենպաստ լուծում գտնելու հայկական իշխանությունների գործունե ջանքերը, որոնք ուղղված էին հակակշռելու Եվրամիության ու

¹ Հարություն Ոսկանյանը անկախ հետազոտող է, ով սովորել է Հայ-Ռուսական, սպա նաև Երևանի պետական համալսարաններում, ստացել քաղաքագիտության բակալավրի և մարդու իրավունքների և ժողովրդավարացման ուղղությամբ եվրոպագիտության մագիստրոսի կոչումներ: «Միջազգային հարաբերություններ և եվրոպական ինտեգրման գիտություններ» ծրագրի շրջանակներում 2019 թվականին սովորել է Էստոնիայի դիվանագիտական դպրոցում: Այժմ Վարշավայի համալսարանի (Լեհաստան) Սոցիալական գիտությունների դպրոցի դոկտորանտուրայի երրորդ կուրսի ուսանող է: Նրա ակադեմիական և հետազոտական հիմնական հետաքրքրությունները ներառում են էթնիկ հակամարտությունների, միջազգային անվտանգության, ազգային շահերի, քաղաքական փոփոխության և փոքր պետությունների արտաքին քաղաքականության խնդիրները: Նա այժմ Լեհաստանի Վարշավայի համալսարանի Սոցիալական գիտությունների դպրոցի դոկտորանտուրայի երրորդ կուրսի ուսանող է: Նրա ակադեմիական և հետազոտական հետաքրքրությունները ներառում են էթնիկ հակամարտությունների, միջազգային անվտանգության, ազգային շահերի, քաղաքական փոփոխության և փոքր պետությունների արտաքին քաղաքականության խնդիրները:

Ռուսաստանի մասնակցությունը, Երևանի համար դառնում են ավելի սահմանափակ ու անգամ վտանգավոր:

2020 թվականի Ղարաբաղյան երկրորդ պատերազմից ի վեր Երևանի հետապնդած «Խաղաղության նոր դարաշրջան» քաղաքականությունը բախվում է ադրբեջանական շանտաժին ու հարկադրանքին, որոնց նպատակն է առավելագույնս օգուտ քաղել պարտված Հայաստանից: Մինևույն ժամանակ, ռուսական միջնորդությամբ Հայաստանի ու Ադրբեջանի միջև սահմանների որոշման ու գատման գործընթացում որևէ առաջընթացի բացակայությունը և հայկական տարածքների Ադրբեջանի սողացող զավթումը դրդեց Եվրամիությանը խաղաղություն երաշխավորելու հարցում առաջարկի իր աջակցությունը սկսած 2021 թվականից:

Այս աշխատանքը ուսումնասիրում է ԵՄ-Հայաստան հարաբերությունները գնահատելու համար հայ-ադրբեջանական խաղաղության գործընթացում Բրյուսելի մասնակցության կարողություններն ու դրա խոչընդոտները, հատկապես Ուկրաինային վրա Ռուսաստանի հարձակումից հետո: Այն նպատակ է հետապնդում հայաստանյան իշխանություններին ներկայացնել առաջարկներ, թե ինչպես Ադրբեջանի հետ սահմանային խնդիրների կարգավորման գործում մեծացնել Եվրամիության միջնորդության հնարավորությունները՝ չառաջացնելով Ռուսաստանի դժգոհությունը:

Գլխաբառեր՝ ԵՄ միջնորդություն, խաղաղության գործընթաց, արտաքին քաղաքականություն, Հայաստան, Ադրբեջան, Ռուսաստան

Ներածություն

Հայաստանն ընդունված է դիտարկել որպես ռուսական ազդեցության գոտի երկու պայմանավորված երկրների միջև պատմական ընդհանուր անցյալով ու քաղաքական հատուկ հարաբերություններով: Հայ-ռուսական մտերմության առաջին պատճառը Թուրքիայի Հայաստանի համար սպառնալիք ներկայացնելն է, որի հետ հարաբերությունների վրա ազդել են Օսմանյան կայսրությունում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրագործված Հայոց ցեղասպանության հարցում ժխտողականությունն ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության հենց սկզբից պաշտոնական Անկարայի՝ Ադրբեջանին քաղաքական ու ռազմական անմիջական աջակցությունը: Երկրորդ պատճառը ադրբեջանական թշնամությունն է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ երկիրը պատերազմ է մղել Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ, ովքեր սկզբում ձգտում էին վերամիավորվել Հայաստանի հետ, իսկ այնուհետև՝

ինքնորոշվել: Հայաստանը, թշնամական հարևանությամբ մեկուսացած լինելով, չի ունեցել այլ ելք, քան ընտրել Ռուսաստանը որպես ստրատեգիական դաշնակից քաղաքականության ու ռազմական ոլորտներում և կանոնավոր սպառազինությունների մատակարարման աղբյուր: Հայ-ռուսական սերտ հարաբերությունները պայմանավորված են նաև երկրի ռուսական ներդրումներով (ռուսական պետական ընկերություններին է պատկանում Հայաստանի տնտեսության զգալի ոլորտները), և Ռուսաստան սեզոնային աշխատանքի մեկնորդների և արտագաղթողների բարձր թվով:

Չնայած անվտանգության ու տնտեսության ոլորտներում լուրջ կախվածության մեջ գտնվելը՝ Հայաստանը փորձել է հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարել Արևմուտքի հետ՝ նպատակ հետապնդելով ամրապնդել իր կապերը ԱՄՆ-ի հետ և խորացնել մերձեցումը Եվրամիության հետ (Aberg Terzyan, 2018)՝ այդպիսով կառուցելով «կոմպլեմենտար արտաքին քաղաքականություն» (Socor, 2013): Այս համատեքստում ԵՄ Արևելյան գործընկերության (ԱԼԳ) ծրագիրը եղել է Հայաստան-ԵՄ հարաբերությունների առանցքում, որը թույլ է տվել Երևանին զգալի առաջընթաց գրանցել ժողովրդավարական բարեփոխումներում և խորացնել իր տնտեսական և քաղաքական հարաբերությունները Բրյուսելի հետ: Չնայած 2013 թվականին Ռուսաստանի ճնշման տակ Հայաստանի՝ Մաքսային միությանը միանալու վերաբերյալ որոշում կայացնելը, որը հետագայում վերաձևափոխվեց Եվրասիական տնտեսական միության, «անդամակցությունից դուրս ելիոպականացման» գործընթացը շարունակվեց՝ պայմանավորված հիմնականում իշխանությունների քաղաքական կամքով և ազգային մակարդակում բարեփոխումների ուժեղ պահանջով (Delcour Wolczuk 2015):

Այն սպասումները, որ Հայաստանը կշարժվի ժողովրդավարական բարեփոխումների ուղիով (Lanskoy Suthers, 2019) 2018 թվականի, այսպես կոչված, «Թավշյա հեղափոխությունից» հետո, չեն արդարացել: Կենտրոնացնելով իր ձեռքում իշխանության բոլոր թևերը՝ վարչապետ Փաշինյանը խախտեց իշխանությունների տարանջատման և անկախության սկզբունքը: Freedom House-ը նրա վարչակարգը գնահատել է անցումային ու հիբրիդային՝ դասելով այն կիսակոնսոլիդացված ավտորիտար ռեժիմ ունեցող պետությունների շարքին (Freedom House, 2022):

Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցությունները ստանձնելուց Փաշինյանի արած այն հայտարարությունը, որը ինքը բանակցությունները սկսում է իր կետից (Pashinyan 2019), համակարգված կերպով քանդեց բանակցությունների տրամաբանությունն ու բանակցային գործընթացի պատմական հետևողականությունը՝ բանակցային գործընթացը տանելով փակուղի:

Հայաստանի իշխանությունների գործողություններն ու 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի արդյունքները Հայաստանը Ռուսաստանից ավելի մեծ կախվածության մեջ դրեցին, քան դա Սերժ Սարգսյանի վարչակարգի օրոք էր: Արդյունքում, Հայաստանը այլևս կարող չէր երաշխավորելու Լեռնային Ղարաբաղի հայերի անվտանգությունը: Ռուսական խաղաղապահները, ովքեր այստեղ տեղակայվել են անմիջապես պատերազմից հետո առանց ՄԱԿ-ից խաղաղապահության առաքելություն իրականացնելու մանդատ ստանալու, Հայաստանի վրա ազդելու լրացուցիչ լծակ դարձավ:

2020 թվականի Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմից ի վեր Ռուսաստանը նախաձեռնել է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման միջնորդությունը՝ նպատակ ունենալով խաղաղություն հաստատելու և հաղորդակցություններն ապաշրջափակելու միջոցով ուժեղացնել իր գերակայությունը տարածաշրջանում: Այդուհանդերձ, հետպատերազմյան շրջանում Ռուսաստանը Ադրբեջանի հետ հետևողականորեն բացառում էին միջազգայնորեն ճանաչված ձևաչափի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի մասնակցությունը բանակցություններին՝ բացառապես նույնացնելով այդ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ՝ ջանալով տարանջատել հայ-ադրբեջանական հակամարտությունը Լեռնային Ղարաբաղից: Ռուսաստանը շարունակեց հավատարիմ լինել համակարտությունների կարգավորման իր ավանդական ռազմավարությանը՝ չներկայացնելով Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության կարգավորման համար համապարփակ ճանապարհային քարտեզի որևէ առաջարկ, բայց շարունակում է ուժեղացնել իր դիրքերը տարածաշրջանում՝ անտեսելով Հայաստանի՝ միջազգայնորեն ճանաչված տարածքների Ադրբեջանի սողացող գավթումները: Այս հանգամանքը նոր հնարավորություն ստեղծեց Եվրամիության համար Բաքվի ու Երևանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացում այլընտրանքային լուծում առաջադրելու համար:

ԵՄ-Հայաստան հարաբերությունների համատեքստը

Հայաստանի անկախացումից ի վեր ենթադրվում էր, որ նրա արտաքին քաղաքականության եվրոպական հարթությունը Ռուսաստանի հետ հարաբերությունները հավասարակշռելու, կախվածությունը թուլացնելու, երկրի ժողովրդավարացումն արագացնելու Երևանի պատրաստակամության կարևորագույն գործոններից է (MFA, 2022): Այնուամենայնիվ, Հարավային Կովկասում Եվրամիության քաղաքականությունը զգուշավոր է եղել, քանի որ չէր

հետապնդում մարտահրավել նետելու տարածաշրջանում Ռուսաստանի ակներև գերակայությանը:

Չնայած Ռուսաստանի նախանձախնդրությանը իր ավանդական ազդեցության գոտում, ինչպիսին որ է Հարավային Կովկասը, ակտիվ դերակատարություն ունենալու Եվրամիության քայլերին, Բրյուսելը ձգտել է գործել կառուցողական իր արևելյան շրջաններում՝ առանց Ռուսաստանին դուրս մղելու մտադրության: Այս առումով, Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) միջոցով Հայաստանը կարողացել է առաջընթաց գրանցել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, բարելավել հակակոռուպցիոն օրենսդրությունը և զարգացնել գործարար միջավայրը՝ լուրջ քայլեր ձեռնարկելով տնտեսության դիվերսիֆիկացման ուղղությամբ (European Commission, 2010):

Այդ ժամանակ Արևելյան գործընկերության ի հայտ գալով Հայաստանի՝ Եվրամիության հնարավորությունների վերաբերյալ լավատեսությունը բարձր էր (Nalbandian, 2013): Այդուհանդերձ, հնարավոր ռիսկերն ու Ռուսաստանի դժգոհությունը ուղղորդեցին նախագահ Սերժ Սարգսյանին հետ կանգնել Եվրամիության հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագիր (ԽՀԱԱԳ) ստորագրելու գաղափարից՝ 2013 թվականին հայտարարելով Հայաստանի՝ Ռուսաստանի գլխավորած Մաքսային միությանը միանալու մտադրության մասին: Պաշտոնական Երևանի այս որոշումը բացահայտորեն ցուցադրեց նախ այն, որ Եվրամիությունը՝ որպես տարածաշրջանային ոչ ռազմական տերություն, բախվել է տարածաշրջանում իր ազդեցության լուրջ սահմանափակումների հետ, և երկրորդ, որ Հայաստանը պատրաստ չէր զոհաբերել իր և Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը հանուն եվրաինտեգրման:

ԵՄ-Հայաստան հարաբերությունները Մայդանի հեղափոխությունից հետո

Ուկրաինական Մայդանի պատմական իրադարձություններից հետո Հայաստանի դեկավարությունը շարունակել է Ռուսաստանի ու Եվրամիության հետ վարել հավասարակշռված արտաքին քաղաքականություն: ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ, 2017) ստորագրումը լուրջ հաջողություն էր հայկական դիվանագիտության համար, որը Ռուսական ճնշման ներքո էր: Երևանը նոր հնարավորություն ունեցավ Արևմուտքի հետ մանևրելու՝ խուսանավելով երկու ինտեգրացիոն

նախագծերի միջև ընտրություն կատարելուց, այն դեպքում երբ շարունակում էր գործել հավասարակշռված բազմակողմ ռազմավարության շրջանակներում (Պինտո, 2017):

2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո Եվրամիությունը Հայաստանում շարունակել է ինտենսիվ աշխատել նոր իշխանությունների հետ՝ աջակություն ցուցաբերելով նոր իշխանությունների հոչակած ժողովրդավարության օրակարգին: Ըստ 2019 թվականի Հայաստանում հանրային կարծիքի ուսումնասիրության՝ նկատելի է, որ Եվրամիության նկատմամբ հանրության վստահությունն ու նրա համբավը Եվրասական տնտեսական միության համեմատ կտրուկ աճել է: Այս միտումը մեծապես պայմանավորված էր ներքին քաղաքականության հարցերում հեղափոխական փոփոխություններին Բրյուսելի դրական արձագանքով (Opinion Survey - Հանրային հարցումներ, 2019): Միաժամանակ, Եվրամիությունը շարունակել է Հայաստանի հանրային դիսկուրսի տարածքում ամրապնդել իր՝ վստահելի գործընկերոջ դիրքերը, և վերջապես, այդտեղ կար նաև Եվրամիության ֆինանսական աջակցության ազդեցությունը:

2020 թվականի COVID-19 կորոնավիրուսային համավարակով պայմանավորված Եվրամիությունը Հայաստանին հատկացրեց ավելի քան 92 մլն եվրո և այնուհետև հայտարարեց 24 մլն եվրոյի (29 մլն դոլար) լրացուցիչ ֆինանսական աջակցության տրամադրելու մասին՝ հաղթահարելու կորոնավիրուսային համավարակը և դրա ծանր սոցիալ-տնտեսական հետևանքները (Ազատություն, 2020): Արևելյան հարևանության կայունության հարցում իր մտահոգության պատճառով Եվրամիությունը Հայաստանին տրամադրել է հսկայական ֆինանսական աջակցություն՝ արդյունավետորեն մեղմելով հետպատերազմական շրջանում տնտեսական և հումանիտար ճգնաժամի հետևանքները (Wfp.org 2021): Բրյուսելը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը դիտել է ոչ միայն որպես խոչընդոտ Հայաստանի սոցիոտնտեսական առաջխաղացման համար (ԵՄ պատվիրակություն, 2021), այլև Ռուսաստանից քաղաքական կախվածության հիմնական պատճառ:

Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմն ու ԵՄ-Հայաստան հարաբերությունները

Ադրբեջանը օգտվեց տրված հնարավորությունից 2020 թվականին Լեռնային Ղարաբաղին հարվածելու համար, երբ արևմտյան ուժերի ուշադրությունը կենտրոնացած էին աշխարհական ու շրջանային խնդիրներին, ինչպիսին են՝ Դոնալդ Թրամփի նախագահության օրոք ԱՄՆ-ում կոշտ նախընտրական արշավը, կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումները և

Brexit-ին հաջորդող հիմնարար փոխակերպումները: Հայաստանի պարտությունից հետո Ռուսաստանը շարունակում է կատարել հակամարտությունը կառավարողի իր դերը՝ խաղաղապահներ տեղակայելով Ղարաբաղում, որը հետխորհրդային միակ հակամարտությունում, որում ռուսական զորքերը մինչ այդ ներգրավված չէին:

Եվրամիությունը՝ որպես տարածաշրջանային ուժ, անկարող եղավ գործի դնել իր դիվանագիտական գործիքները Ղարաբաղում արյունալի պատերազմը զսպելու համար (Մայստեր, 2022), որը Հայաստանում Եվրամիության՝ իր արժեհամակարգին հանձնառու լինելու հարցում հիասթափություն և թերահավատություն առաջացրեց: Միայն Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի անմիջական միջամտությունն ու միջնորդությունը հնարավոր դարձրեց 2020 թվականի նոյեմբերի 9-ի հրադադարը, ինչը մեխանիկորեն դուրս մղեց արևմտյան մյուս երկու միջնորդ կողմերին (Ֆրանսիա և ԱՄՆ) ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցային գործընթացից: Հետագայում Ռուսաստանը Թուրքիայի հետ միասին փորձեցին ստանձնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման գործընթացի նկատմամբ հսկողությունը՝ բացառելով Արևմուտքի մասնակցությունը, ապա նաև հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման ուղիների որոնման գործընթացը դարձնելով առաջին հերթին եվրասիական երկու տերությունների միջև սակարկության առարկա:

Եվրասիական նոր՝ Թուրքիայի առաջարկած նախաձեռնությունը, որով նպատակ կար խթանել շրջանային համագործակցության նոր ձևաչափ (“3 + 3”) երեք հարավկովկասյան երկրների (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան) ու տարածաշրջանի այլ երեք ազդեցիկ տերությունների (Թուրքիա, Իրան, Ռուսաստան) մասնակցությամբ, ևս դատապարկված էր ձախողման: Ի սկզբանե Թուրքիայի գլխավորած տնտեսական նախաձեռնությունը չունեի որևէ ողջամիտ կամ վստահելի հիմք տարածաշրջանային համագործակցության համար, բայց արտահայտում էր Անկարայի ու Մոսկվայի ցանկությունը ստեղծելու տարածաշրջանային նոր կոնֆիգուրացիա: Թուրքական առաջարկը անտեսում էր գոյություն ունեցող վեճերը, ինչպիսին էին Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի տարածքների Ռուսաստանի զավթումը, տասնամյակների չլուծված տարածաշրջանային հակամարտությունները, ինչպիսին էին Հայաստանի՝ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշվելու ցանկությունը: Միաժամանակ, Անկարայի նախաձեռնությունը հաշվի չէր առնում շիա Իրանի և սուննի Թուրքիայի միջև հիմնարար հակադրությունները Հարավային Կովկասում տարածաշրջանային գերիշխանության համար մղվող պայքարի հարցում:

Հայ-ադրբեջանական հակամարտությունում աճող փակուղին, որը պարբերաբար ուղեկցվում էր սրացումներով և Հայաստանի ճանաչված տարածքների Ադրբեջանի աստիճանական զավթումով, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելին դրդեցին ակտիվ դիրք գրավել: Առաջին հանդիպումը, որը Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարների մասնակցությամբ տեղի է ունեցել 2021 թվականի դեկտեմբերի 14-ին Բյուսելում, նպատակ ուներ հակամարտող կողմերին

մասնակից դարձնել խաղաղության բանակցություններին Եվրամիության հովանու ներքո: Հանդիպումից առաջ Շառլ Միշելը հեռախոսագրույց է ունեցել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ, որի ժամանակ, ի թիվս այլ աշխարհային հարցերի, քննարկվել է Հայ-ադրբեջանական հակամարտությունը (Միշել, 2021): Այս քայլը նախևառաջ նպատակ ուներ խորհրդակցելու Ռուսաստանի նախագահի հետ խաղաղության գործընթացի շուրջ և այնուհետև մեղմելու Ռուսաստանի նախանձախնդրությունը Եվրամիության միջնորդությամբ բանակցությունները կազմակերպելու հարցում: Ուկրաինայի վրա Ռուսաստանի հարձակումից հետո, այնուամենայնիվ, Բրյուսելը դադարեցրել է հայ-ադրբեջանական խաղաղության գործընթացի հարցերով Մոսկվայի հետ հաղորդակցությունը՝ այդ հարցում մրցելով վերջինիս հետ: Այդուհետ, իրավիճակը սրվելուն պես ռուսաստանցի համանախագահողը հրաժարվեց համագործակցել Մինսկի խմբի ֆրանսիացի և ամերիկացի համանախագահողների հետ (Միվիլենթ 2022)՝ մեղադրելով նրանց այդ ձևաչափով աշխատելուց հրաժարվելու մեջ՝ այսպիսով լրջորեն վնասելով բանակցային գործընթացը:

Իրականում թե՛ Ռուսաստանի և թե՛ Եվրամիության նախաձեռնությունների նպատակն էր իրականացնել իրենց սեփական քաղաքական շահերը: Միևնույն ժամանակ Հայաստանը երկու կողմերի հանդեպ էլ անվստահություն ունի: 2022 թվականի փետրվարի 22-ին՝ մինչև Ուկրաինա Ռուսաստանի ներխուժումը, Ռուսաստանի և Ադրբեջանի միջև ստորագրվել է դաշնակցային համագործակցության մասին փաստաթուղթը (Կրեմլ, 2022), ինչը Հայաստանում ռազմավարական դաշնակից Ռուսաստանից հիասթափվելու պատճառ էր: Ադրբեջանի հետ գազի մատակարարման ծավալների մեծացման մասին համաձայնագրի Եվրամիության ստորագրումը մտահոգություն առաջացրեց, որը կարող է ազդել նաև խաղաղ գործընթացի վրա (Քուինն, 2022): Այդ ընթացքում Հայաստանը շարունակում է համագործակցել թե՛ Ռուսաստանի ու թե՛ Եվրամիության հետ բանակցության գործընթացում վնասները նվազագույնի հասցնելու համար՝ փորձելով ընդունելի լուծումներ գտնել տարածաշրջանում հետպատերազմյան դասավորվածության պայմաններում և խուսափելով միակողմանի զիջումներ կատարելուց: Այնուամենայնիվ, պետք է գիտակցել, որ Ռուսաստանը ազդեցության բազմաթիվ լծակներ ունի տարածաշրջանում և կարող է իսկական ձախողումների աղբյուր դառնալ Հայաստանի համար, եթե Երևանն ընտրի միայն Եվրամիության աջակցությունը: Մինչև Ուկրաինայում ռուսական պատերազմը, Հայաստանը սահմանփակ հնարավորություն ուներ հավասարակշռելու իր հարաբերությունները Ռուսաստանի ու արևմուտքի հետ արտաքին քաղաքականության ոլորտում՝ վերջիններիս միջև սրված մրցակցության պատճառով: Սակայն, ներկայումս՝ Ուկրաինայում Ռուսաստանի դիրքերի զիջումից հետո, նոր հնարավորություններ են ստեղծվել Եվրամիության համար Ադրբեջանի ու Հայաստանի միջև խաղաղության գործընթացում ավելի ակտիվ դերակատարություն ունենալու համար: Այնուամենայնիվ, չնայած, որ Ռուսաստանը Հայաստանին ուղերձներ է հղում Մոսկվայի միջնորդական աջակցությունը ընտրելու մասին,

Երևանը կարիք ունի Ռուսաստանի աջակցության հետ միասին օգտվելու ԵՄ աջակցությունից հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման հարցում ամենաընդունելի տարբերակը գտնելու համար:

Դիտարկումներ և Առաջարկություններ

Ուկրաինայում Ռուսաստանի վարած պատերազմը ավելի է սահմանփակել Հայաստանի արտաքին քաղաքականություն վարելու և Ադրբեջանի հետ խաղաղության հաստատման գործընթացում խուսանավելու ճկունությունը: Այնուամենայնիվ, Հայաստանը չի կարող ամբողջությամբ անտեսել Ռուսաստանին և այն հանգամանքը, որ Մոսկվան շահեր ու ներգրավվածություն ունի Հարավային Կովկասում: Արևմուտքի հետ Ռուսաստանի հարաբերությունների վատթարացումը Երևանի համար Ռուսաստանի ու Եվրամիության հետ հավասարակշռված համագործակցություն վարելու նոր հնարավորություններ է ստեղծում՝ նպատակ ունենալով Բաքվի հետ խաղաղության ցանկացած գործարքում կորուստները հասցնել նվազագույնի: Իրականում թե՛ Ռուսաստանը և թե՛ Եվրամիությունը հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործում մրցում են առաջատար դիրքի համար, թեպետ Ռուսաստանը հակամարտող կողմերի վրա ազդելու ավելի մեծ լծակներ ունի կամ Ադրբեջանին սադրելու հարձակման: Չնայած Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության արդյունավետ խթանման համար գործադրված Եվրամիության լայն դիվանագիտական և կարգավորիչ գործիքներին, Ռուսաստանը խոչընդոտելու է հակամարտող կողմերի ցանկացած քայլ դեպի խաղաղություն արևմտյան ճանապարհային քարտեզով: Ուկրաինայում պատերազմի բռնկումից ի վեր վերադասավորումների պայմաններում գործելու համար անհրաժեշտ է մի քանի առաջարկություններ ներկայացնել Հայաստանի իշխանություններին և Եվրամիությանը:

Առաջարկություններ

Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը

- Շարունակել խաղաղության հաստատման համար տարվող բանակցությունները Ադրբեջանի հետ՝ հավասարակշռելով Եվրամիության ու Ռուսաստանի դերակատարությունները, մինչև որ ընդունելի լուծումը գտնվի,
- Տարանջատել հստակորեն հայ-ադրբեջանական սահմանների որոշման ու գատման գործընթացը, որում Մոսկվան ու Բրյուսելը կարող են հանդես գալ որպես միջնորդներ, և Լեռնային Ղարաբաղում հայերի ինքնորոշման օրինական ձգտումը, որը ֆորմալ առումով շարունակում է կարգավորվել ԵԱՀԿ Մինսկի խումբը,

- Գործածել հնարավոր դիվանագիտական գործիքները ԵԱՀԿ Մինսկի խումբը որպես միակ լեգիտիմ հաստատություն բանակցությունների գործընթաց վերադարձնելու համար, որը կարող է աջակցել Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանների որոշմանն ու գատմանը,
- Աշխատել ինտենսիվորեն երկու կողմերի՝ Բրյուսելի ու Մոսկվայի հետ՝ անտեսելով Ադրբեջանի ռազմատենչ ու ագրեսիվ հռետորաբանությունն ու վերջնագրերը: Բարդ և կայուն խաղաղության համաձայնագրի շուրջ բանակցությունները ժամանակ և փորձառություն են պահանջում:
- Խուսափել ցանկացած հայտարարությունից, որը կարող է վնասել բանակցային գործընթացը, հատկապես Ռուսաստանին և ՀԱՊԿ-ին ուղղված սադրիչ հայտարարություններից, քանի որ Կրեմլն ունի մի շարք ֆորմալ և ոչ ֆորմալ գործիքներ, որոնք կարող են Հայաստանի համար ինչպես խնդիրներ լուծել, այդպես էլ ստեղծել խնդիրներ:

Եվրամիության համար

- Շարունակել բրյուսելյան միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության համար բանակցային ձևաչափը՝ անտեսելով Ռուսաստանի համառ ջանքերը՝ ուղղված բանակցությունների եվրոպական տարբերակը տապալելուն:
- Գործածել դիվանագիտական խողովակները ազդելու Ադրբեջանի վրա, որպեսզի կանխի Բաքվի ներխուժումը, զավթումը և սադրիչ գործողությունները հայ-ադրբեջանական սահմանին, որը կարող է վնասել բանակցային գործընթացը:
- Ընդլայնել Բրյուսելի ուղղարկած սահմանների մշտադիտարկման խմբերի ներկայությունը, ինչը կապահովվի ԵՄ կանոնավոր ներկայությունը տեղում:

Գրականության ցանկ

- Aberg, John, Terzyan, Aram. 2018. Structure or Agency? Explaining Armenia's Foreign Policy Evolution. EASTERN JOURNAL OF EUROPEAN STUDIES Volume 9, Issue 1, 151-172. Հասանելի է https://ejes.uaic.ro/articles/EJES2018_0901_ABE.pdf վերջի մուտք՝ սեպտեմբերի 9, 2022.
- Azatutyun.am. 2020. EU Approves More Coronavirus Aid To Armenia. Հասանելի է <https://www.azatutyun.am/a/31015353.html> վերջի մուտք՝ սեպտեմբերի 8, 2022.
- CEPA. 2017. Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and The European Atomic Energy Community and Their Member States, of the One Part, and The Republic of Armenia, of the other Part. Հասանելի է https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ENG_1.pdf վերջի մուտք՝ հոկտեմբերի 30, 2022.
- Civilnet.am. 2022. Minsk Group's effectiveness in doubt as Lavrov says US, France refuse to work with Russia. Հասանելի է <https://www.civilnet.am/en/news/657045/minsk-groups-effectiveness-in-doubt-as-lavrov-says-us-france-refuse-to-work-with-russia/>. վերջի մուտք՝ հոկտեմբերի 12, 2022.
- Delcour, Laure & Wolczuk, Kataryna. 2015. The EU's Unexpected 'Ideal Neighbour'? The Perplexing Case of Armenia's Europeanisation. Journal of European Integration, 37:4, 491-507. Հասանելի է <https://doi.org/10.1080/07036337.2015.1004631> վերջի մուտք՝ հոկտեմբերի 30, 2022.
- EU Delegation to Armenia. 2021. The European Union and Armenia. Delegation of the European Union to Armenia. Հասանելի է https://www.eeas.europa.eu/armenia/evropakan-miowtyowne-ev-hayastane_hy?s=216&page_lang=en վերջի մուտք՝ նոյեմբերի 30, 2022.
- European Commission, 2010. Progress Report Armenia: Implementation of the European Neighbourhood Policy in 2009. Հասանելի է [http://aei.pitt.edu/39593/1/SEC_\(2010\)_516.pdf](http://aei.pitt.edu/39593/1/SEC_(2010)_516.pdf) վերջի մուտք՝ սեպտեմբերի 8, 2022.
- Freedom House. 2022. Nations in Transit. Հասանելի է <https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2022> վերջի մուտք՝ նոյեմբերի 1, 2022.
- Kremlin. 2022. Statements for the press following Russian-Azerbaijani talks. Հասանելի է <http://en.kremlin.ru/events/president/news/67837> վերջի մուտք՝ հունիսի 25, 2022.
- Lanskoy, Miriam, Suthers, Elspeth. 2019. Armenia's Velvet Revolution. Journal of Democracy 30(2), 85-99. Հասանելի է doi:10.1353/jod.2019.0027. վերջի մուտք՝ սեպտեմբերի 9, 2022.
- Meister, Stefan. 2022. Restoring EU influence in the South Caucasus. The Parliament Magazine. Հասանելի է <https://www.theparliamentmagazine.eu/news/article/restoring-eu-influence-in-the-south-caucasus?fbclid=IwAR2FjvCZVJD7UNAFxhzYzbOW4v6ZGxQpH6yySSO0fHuDIuCI9YdY6RajvXM#.Yf53YmwGy5Y.facebook>. վերջի մուտք՝ սեպտեմբերի 12, 2022.
- MFA. 2022. The Republic of Armenia-European Union Partnership. Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia. Հասանելի է <https://www.mfa.am/en/bilateral-relations/eu> վերջի մուտք՝ նոյեմբերի 30, 2022.

- Michel, Charles. 2021. Readout of the telephone conversation between President Charles Michel and Russian President Vladimir Putin. Հասանելի է՝ <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2021/06/07/readout-of-the-telephone-conversation-between-president-charles-michel-and-russian-president-vladimir-putin/> Վերջի մուտք՝ հոկտեմբերի 30, 2022.
- Nalbandian, Edward. 2013. Remarks by Mr. Edward Nalbandian, Minister of Foreign Affairs of Armenia Eastern Partnership Informal Ministerial Meeting. Հասանելի է՝ <https://www.mfa.am/en/speeches/2013/02/12/eap-tbilisi-sp/3405> Վերջի մուտք՝ հոկտեմբերի 28, 2022.
- Opinion Survey 2019: Armenia. 2019. Opinion Survey. Հասանելի է՝ <https://euneighbourseast.eu/news/opinion-polls/opinion-survey-2019-armenia/> Վերջի մուտք՝ հոկտեմբերի, 2022.
- Pashinyan, Nikol. 2019. Nikol Pashinyan: “We will impose peace in case of a war imposed on us”. Հասանելի է՝ <https://www.primeminister.am/en/statements-and-messages/item/2019/04/08/Nikol-Pashinyan-Nagorno-Karabakh-conflict/> Վերջի մուտք՝ նոյեմբերի 1, 2022.
- Pinto, Diogo. 2017. The new agreement with the EU is a great success for Armenia’s diplomacy. Հասանելի է՝ <https://eufoa.org/the-new-agreement-with-the-eu-is-a-great-success-for-armenias-diplomacy/> Վերջի մուտք՝ սեպտեմբերի 8, 2022.
- Quinn, Colm. 2022. The EU Turns to Baku. Հասանելի է՝ <https://foreignpolicy.com/2022/07/18/azerbaijan-gas-eu-von-der-leyen/> Վերջի մուտք՝ նոյեմբերի 1, 2022.
- Socor, Vladimir. 2013. The End of ‘Complementarity’ in Armenia’s Foreign Policy. Eurasia Daily Monitor Volume: 10, Issue: 165. Հասանելի է՝ <https://jamestown.org/program/the-end-of-complementarity-in-armenias-foreign-policy/>. Վերջի մուտք՝ սեպտեմբերի 7, 2022.
- Wfp.org. 2021. The European Union helps WFP provide humanitarian assistance for conflict-affected people in Armenia. World Food Programme. Հասանելի է՝ <https://www.wfp.org/news/european-union-helps-wfp-provide-humanitarian-assistance-conflict-affected-people-armenia> Վերջի մուտք՝ սեպտեմբերի 7, 2022.